Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Սիրելի շրջանավարտներ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ և շնորհավորում դպրոցական ուսումնառությունն ավարտելու առիթով: Այսօր դուք շրջանավարտ եք դպրոցի և կանգնած եք կյանքի մի նոր շրջանի նախաշեմին:

Հաստատուն քայլերով և անսայթաք երթով ընթացեք ձեր կյանքի շավիղներով, դպրոցում ամբարած ձեր գիտելիքները և հոգևոր արժեքների ճանաչողությունն առավել զորացրեք ու արժանավոր գործեր դարձրեք ի սեր ձեր հոգում խնամքով փայփայած բարի իղձերի ու երազների իրականացման, ի սեր մեր Հայրենիքի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
24 մայիսի 2007 թ.